ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԾԷՍԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Անահիտ Մխիթարեան

Ծէսը ազգային մտածողութեան ու աշխարհընկալման դրսեւորումն է, որը ձեւաւորուել է վաղնջական ժամանակներից: Թէ՛ հին եւ թէ՛ յետագայ բոլոր ժամանակներում մարդու ծնունդն ու կնունքն օրինականացուել են մի շարք ծէսերով ու ծիսահմայական գործողութիւններով:

Մկրտութեան ծէսի մասին վկայութիւններ են պահպանուել ինչպէս ժողովրդական բանահիւսութեան մէջ, այնպէս էլ Ե.-ԺԸ. դարերի միջնադարեան սկզբնաղբիւրներում: Ագաթանգեղոսը յիշատակում է, թէ ինչպէս է Գրիգոր Լուսաւորիչը Եփրատում մկրտում հայոց թագաւորին, նրա ընտանիքին ու հազարաւոր մարդկանց. «...Եւ իբրեւ իջանէին մարդիկն ամենայն եւ թագաւորն ի մկրտութիւն անդր, ի ջուրսն Եփրատ գետոյն՝ նշան սքանչելի երեւեալ յԱստուծոյ: ... Եւ իւղն աւծութեան, զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝ շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկաւն խաղայր: ...Եւ անտի ելեալ մեծաւ ցնծութեամբ եւ սպիտակազգեստ հանդերձիւք, սաղմոսիւք եւ աւրհնութեամբք կանթեղաւք վառելովք, եւ մոմեղինաւք լուցելովք...»:[1]

Մկրտութեան ժամանակ սովորութիւն էր սպիտակ հագնել՝ իբրեւ մաքրութեան խորհրդանիշ. «Յետ Մկրտութեան՝ ընդհանուր քրիստոնէից սովորոյթն էր սպիտակ զգենուլ՝ ի նշան մաքրութեան հոգւոյ: Այսպէս եւ Հայք, երբ մկրտուեցան Լուսաւորչէն, «սպիտակ հանդերձիւք» գետէն եկեղեցի կը դառնան»[2]*:*

Հայոց մէջ Մկրտութեան ծէսը հանդէս է գալիս հիմնականում կնունք անուամբ: Ըստ ժողովրդական հաւատալիքների՝ «եթէ ծնունդն առաջինն է, եւ մայրը տանջւում է սանջու ցաւով, ամուսինը ջուրը մկրտում է, այսինքն՝ մկրատով կտրում է»[3]*. այստեղից էլ գուցէ առաջացել են մկրատել, մկրտել անուանումները*[4]*:*

Ազգագրական որոշ շրջաններում տարբերակւում էր կնունքն ու Մկրտութիւնը, օրինակ՝ Ջաւախքում քահանան գալիս էր տուն եւ տանն էր կատարում կնունքի խորհուրդը, որից յետոյ բոլորը, բացի ծնողներից[5]*, գնում էին եկեղեցի՝ շարունակելու արարողութիւնը:*

Եկեղեցում միաժամանակ մի քանի կնունք լինելու դէպքում նախ եւ առաջ մկրտում էին տղայ երեխային, եթէ անգամ քահանան արդէն սկսած էր լինում աղջիկ երեխայի արարողութիւնը[6]*, ընդհատում եւ մկրտում էր տղային: Լինում էին նաեւ դէպքեր, երբ մի քանիսին միանգամից էր կնքում քահանան:*

Այն վայրերում, ուր չկար եկեղեցի, մկրտում էին որեւէ սրբավայրում, մատուռում, որը համարւում էր մկրտարան կամ

---

1 **Ագաթանգեղոս**, *Պատմութիւն Հայոց* (Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան): Տե՛ս *Մատենագիրք Հայոց*, Բ հտ., Ե. դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1700-1701:

2 **Հացունի Վ.**, *Պատմութիւն հին հայ տարազին*, Վենետիկ, 1923, էջ 295:

3 **Լալայեան Ե.**, *Ջաւախք*, – «Ազգագրական հանդէս» (այսուհետեւ՝ ԱՀ), գիրք Ա., Շուշի, 1895, էջ 271:

4 «Մկրտել» բառն ունի վաղ հիմքեր. այն առաջացել է «մկրատել, կտրել» անուանումներից: Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Բ, Վենետիկ, 1836, էջ 285: Տե՛ս նաեւ **Մխիթարեան Ա.**, *Մկրտութեան եւ դրոշմի խորհուրդների նշանակութիւնը*, – «Հանդէս ամսօրեայ», թիւ 1-12, Վիեննա, 2020, էջ 486:

5 **Լալայեան Ե.**, *Ջաւախք*, էջ 271:

6 Նոյն տեղում, էջ 270:

մկրտատուն[7]: Եթէ Մկրտութիւնը տանն էր կատարւում, ապա արարողութիւնն անում էին թոնրի շուրջը[8] կամ մեռոնաջրով լցուած մաքուր թասի, անգամ հացի տաշտի մէջ: Էպոսում Սանասարին ու Բաղդասարին Մելիքսէթ քահանան նոյնպէս կնքում էր թոնրի վրայ.

«Ինն ամիս վոր թամամից, // Աստուածութուն խաչապաշտ թագատրի աղջկան

Երկու տղայ տուից. // Վարդապետ թոնդրան վրայ կնքից.

Մէկի անուն դրից Սանասար, // Մէկին՝ Բաղդասար»[9]:

Կնունքը, որքան հնարաւոր էր, շուտ էին կատարել, քանի որ ժողովրդի մէջ պահպանուած էր այն սնահաւատութիւնը, թէ չարքերն անկնունք երեխաներին վնաս են հասցնում, ուստի երեխայի Կնունքը կատարւում էր ծննդեան եօթերորդ օրը լրանալուց յետոյ[10]: Սակայն այսպիսի Մկրտութիւններն աւելի ուշ շրջանի երեւոյթ են եղել, քանի որ վաղ ժամանակներում մկրտուել են ոչ թէ մանկահասակները, այլ չափահասները: Մաշտոց ծիսական ժողովածուի հնագոյն բնագրերից երեւում է, որ մկրտուողները չափահաս են եղել[11]: Մկրտութիւնից յետոյ չափահաս տղաները մնում էին եկեղեցում ութ օր. «եւ ութ աւր յեկեղեց(ւ)ոջն կացցէ, սպիտակազգեստ լիցի եւ գլուխն ծածկէ(ս)ցէ սպիտակ փակեղամբք, զգոյշ կացցէ աղաւթից եկեղեց(ւ)ոյն պարապելով յամենայն ժամ, հաղորդելով մարմնոյ եւ արեանն Քրիստոսի: Եւ յետ ութ աւուր, վերացուցանէ քահանայն զպսակն...»[12]:

Ինչպէս տեսնում ենք, մեծահասակների Մկրտութիւնն աստիճանաբար տեղի է տուել նորածին երեխաների Մկրտութեանը, որոնց կրօնական դաստիարակութեամբ պէտք է զբաղուէին կնքահայրերը եւ նրանց փոխարէն պատասխանատու լինէին հասարակութեան առաջ. «...կնքահայրն խրատէ եւ կերակրէ զնա բանիւ եւ զգեցուցանէ զնա: ...եւ թէ մկրտեալն փոքր լիցի եւ թէ մեծ՝ պիտոյ է կնքահայր, զի լեզու եւ միջնորդ է նա առ քահանայն»[13]:

Մկրտութեան նախորդ օրը՝ երեկոյեան, մկրտուող երեխայի տնից տատմօրը նուէրներով (մրգեղէն, գաթայ, օղի կամ գինի, հալուայ, եփած հաւ, երբեմն էլ՝ ոչխար՝ եղջիւրներին կանաչ-կարմիր թել կապած եւ այլն, ինչպէս նաեւ մի քանի զոյգ գուլպայ ու թաշկինակ)[14] ուղարկում էին կնքա-

---

7 Տուն և տեղի մկրտելոյ, մատուռն՝ յորում կանգնեալ կայ աւազան մկրտութեան՝ մօտ առ մեծ եկեղեցին, կամ ի մէջ նորա ի կողմն մի: Տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, հտ. Բ, Վենետիկ, 1836, էջ 285:

8 **Լալայեան Ե.**, *Վարանդա*, – ԱՀ, գիրք Բ., Թիֆլիս, 1897, էջ 148:

9 *Սասնա ծռեր*, հտ. Ա, խմբագրութեամբ Մ. Աբեղեանի, Եր., 1936, էջ 129:

10 Որոշ շրջաններում մկրտում էին ծննդեան առաջին շաբաթում: Տե՛ս **Լալայեան Ե.**, *Նախիջևանի գաւառ*, Ա. մաս՝ Գողթն, – ԱՀ, գիրք XII, Թ., 1905, էջ 138: **Մուրադեան Յ.**, *Համշէնցի հայեր*, – ԱՀ, գիրք Ե., Թիֆլիս, 1899, էջ 363:

11 Տե՛ս Մաշտոց. արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կարգաւորութեան սրբոց հարցն մերոց, բաղդատութեամբ բազմաթիւ եւ հնագիր օրինակաց իբր յիսնից նաեւ հնագոյն երկաթագիր ձեռագրի, Վենետիկ, 1831 (այսուհետեւ՝ Մաշտոց, Վենետիկ, 1831), էջ 1: Տե՛ս նաև **Հ. Ճեմճեմեան Ս.**, *Մկրտութեան արարողութիւնը Մաշտոցներու մէջ*, – «Բազմավէպ», 1971, թիւ 1-2, էջ 27: **Հ. Հացունի Վ.**, *Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ*, Վենետիկ-Ս. Ղազար, 1912, էջ 400:

12 Ձեռ. 457, Մաշտոց, Թ. կամ Ժ. դ., «Կանոն Մկրտութեան [եւ Կնունք տալոյ] յորժամ քրիստոնեա(յ) առնեն», թղ. 76ա: Տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Գ, Մաշտոց – Գիրք ձեռնադրութեանց, յօրինեցին Հ. Բարսեղ Սարգսեան եւ Հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1966 (այսուհետեւ՝ Վենետիկի ցուցակ, հտ. Գ), էջ 22:

13 **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր*, Երուսաղէմ, 1998, էջ 145:

14 Դա կոչւում էր «սեղան»: Տե՛ս **Լալայեան Ե.**, *Վարանդա*, – ԱՀ, գիրք Բ., Թ., 1897, էջ 148:

հօր տուն, որպէսզի հրաւիրի յաջորդ օրը երեխային մկրտելու: Գողթան գաւառում[15] կնքահօրն ուղարկած այս խոնչան կոչւում էր «կնքալուսիկ», որը բաղկացած էր լինում չորս խնձորից, մի փունջ ծաղկից եւ մի կուժ գինուց: Կնքալուսիկն ստանալուց յետոյ քաւորն էլ սանամօր համար էր ուղարկում «թաբախ»[16] (մատուցարան, ուր դրուած էին լինում մի շիշ օղի կամ մի կուժ գինի, մի ափսէ հալուայ, կարմիր ձուեր, տապակած հաւ կամ ոչխարի մի բուդ եւ այլն): Որոշ տարածաշրջաններում կնքահայրը փոխադարձաբար նուէրը տալիս էր հէնց տատմօրը՝ հիմնականում մթերքի, երբեմն էլ՝ մի փոքր գումարի տեսքով, իսկ երեխայի համար ուղարկում էր չթէ կամ թաւշէ կարմիր կտոր ու սաւան[17], որը կոչւում էր կնգուղ[18] (կնկուղ, կնքակտոր). դա երեխայի վրայ էին գցում եկեղեցուց տուն տանելիս[19]: Յաճախ կնկուղը կնքահայրն էր իր հետ տանում էր եկեղեցի հէնց Մկրտութեան օրը[20]: Նորածնի տատը եկեղեցի էր ուղարկում նարօտ՝ սպիտակ ու կարմիր կամ կանաչ ու կարմիր թելերից հիւսուած[21]: Նոյն երեկոյեան ծննդկանի տնից մթերքի ձեւով նուէրներ ու մի զոյգ մոմ էին ուղարկում քահանային եւ հրաւիրում՝ երեխային մկրտելու:

Հիմնականում մկրտուող երեխային եկեղեցի էր տանում տատմայրը (տատմօր փոխարէն կարող էր լինել դայակը կամ մանկաբարձը): Նրա հետ եկեղեցի էր գնում նաեւ մի երեխայ՝ տանելով փարչով լի տաք ջուր, որը կոչւում էր կնքափարչ[22]: Ջաւախքում դայակն իր տնից էր տանում բարուրի պարագաները, եթէ երեխան առաջնեկն էր. «մեռոնալաթը տանից են տանում եւ վերջն ընծայում եկեղեցուն[23]:

Եկեղեցու մուտքի մօտ տատմայրը դնում էր երեխային գետնին, իսկ կնքահայրը ծնկի էր գալիս ու վերցնում. «եւ դնէ մանկաբարձն զտղայն ի գետինն՝ առաջի դրան եկեղեցոյն, որ նշանակէ զարտաքսիլն Ադամայ ի դրախտէն եւ զանկանելն յերկիրս անիծից: Եւ ասէ քահանան սաղմոս. «ի քեզ անկայ՝ ես յարգանդէ [յորովայնէ մօր իմոյ, դու ես Աստուած իմ]: Եւ գայ կնքահայրն եւ Գ. ծունր կրկնէ եւ առնու զտղայն ի գետնոյն ի վեր յաւրինակ Քրիստոսի, որ է առ ադամական բնութիւնս եւ Հօր Աստուծոյ որդիացոց»[24]: Ապա կնքահայրը երեխային դրկում եւ մօտենում էր բեմի ձախ կողմում գտնուող մկրտութեան աւազանին, իսկ քահանան լինում էր եկեղեցու աջ կողմում: Նրանք կանգնում էին դէմքով դէպի արեւմուտք՝ ասելով նախ՝ «հրաժարիմքը», ապա՝ «հաւատամքը», այսինքն՝ մկրտուողը, հրաժարուելով մեղանչական աշխարհից, շրջւում էր դէպի հաւատք՝ դառնալով քրիստոնէական եկեղեցու անդամ:

Մկրտութեան աւազանի մօտ ջուրը մտցնելու համար քահանան պահանջում էր մերկացնել երեխային (տղային), որը

15 Նոյնի՝ *Նախիջեւանի գաւառ*, Ա. մաս՝ Գողթն, – ԱՀ, գիրք XII, Թ., 1905, էջ 138:

16 Նոյն տեղում:

17 Սաւան – Նորածին սանիկի համար կնքահօր նուիրած շորեղէն (շապիկ, գլխարկ և այլն): Տե՛ս **Աղայեան Է.**, *Արդի հայերէնի բացատրական բառարան*, Եր., 1976, հտ. Բ, էջ 1282:

18 Կնգուղ – Մկրտուող երեխայի վրա գցուող սաւան կամ շոր (նոյն տեղում, հտ. Ա, էջ 742):

19 **Լալայեան Ե.**, *Սիսիան*, – ԱՀ, գիրք Գ., Թ., 1898, թ. 1, էջ 230:

20 Համշէնում կնքահայրը ո՛չ երեխային, ո՛չ էլ ծննդկանին ոչինչ չէր տալիս, միայն որոշակի գումար էր տալիս քահանային ու դայեակին: Տե՛ս **Մուրադեան Յ.**, *Համշէնցի հայեր*, էջ 364:

21 **Լալայեան Ե.**, *Բորչալուի գաւառ*, – ԱՀ, գիրք IX, Թ., 1902, էջ 254:

22 Նոյնի՝ *Մուշ-Տարօն*, – ԱՀ, գիրք XXVI, Թ., 1916, էջ 180:

23 Նոյնի՝ *Ջաւախք*, – ԱՀ, Ա. գիրք, Շուշի, 1895, էջ 270:

24 Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարան (այսուհետեւ՝ ՄՄ), ձեռ. 2788, Մայր Մաշտոց, Աղթամար, 1463 թ., էջ 74բ:

խորհրդանշում էր մկրտուողին ադամական մեղքից ազատելը եւ Սուրբ Հոգու զօրութեամբ նոր կեանքով նորոգելը: Ապա հագցնում էին մկրտուողին. «...եւ դնէ կնկուղն ի գլուխ. Դի՛ր, տէ՛ր, սաղաւարտ փրկութեան ի գլուխ սորա, պատերազմել ընդ զօրութիւնս թշնամ(ւ)ոյն: Եւ ապա կապէ զնարաւտն ի վիզն. Զգեցո՛, Տէ՛ր, պարանոցի սորա զօրութիւն եւ սրբեա՛ յամենայն աղտեղութենէ մեղաց, շնոյ[ր]հօք: Զմիջացն. Շուրջ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սրտի եւ զմտաց սորա...: Ապա կապեսցէ ի վերայ սպիտակ զգեստ եւ ասէ. Զգեցեալ սպիտակ գնասցէ անյաղթ առաջի աթոռոյն Աստուծոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի...: Ապա տայ մոմ կարմիր եւ կանաչ ի ձեռն եւ ասէ. Ա՛ռ զլապտերս հաւատոյ եւ բարի գործոց, զի ի գալն երկնաւոր փեսային՝ արժանասցիս մտանել ի յառագաստն լուսոյ ի վայելել ի կեանսն յաւիտենից»[25]: Իսկ մեկ այլ ձեռագրում յիշատակւում է. «եւ կապեն գաւտի ի մէջսն, եւ թագ ի գլուխն, եւ խաչ ի վիզն»[26]:

Միջնադարում գօտին ունեցել է իր խորհուրդն ու նշանակութիւնը[27]. «առաջին գաւտի քրիստոնէականն է, որ յետ կնքոյն յաւազանն զգեցուցանէ քահանայն սպիտակ հանդերձ եւ ածէ գաւտի ընդ մէջն՝ զնարաւտն, մանեալ կարմիր եւ սպիտակ»[28]: Յովհաննէս Երզնկացին յիշատակում է նաեւ մանկտաւագներին[29], որոնք որդեգրում էին մանուկներին եւ նրանց հասունանալուց յետոյ գօտի էին տալիս.

«Յորժամ գօտի տայ մանկտաւագն որդեգրին, ասէ. «ո՛վ որդեակ, պատուիրեմ քեզ Ժէ. բանս, որոց առաջին այս է՝ սիրեա՛ զաստուած, որ քո արարիչ է... Քո ծնողացն հնազանդ կաց եւ պատուեա՛ զնոսա, զի յետ Աստուծոյ մարդոյն երախտաւոր ծնաւղքն են: Սիրեա՛ զաշխատիլն, որ ի քո վաստակոցն դու ուտես եւ այլոց տաս...: Ընդ ամենայն մարդոյ զխաղաղութիւն կալ եւ մի՛ լինիլ կռուասէր, զի խաղաղասէրն որդի Աստուծոյ է...»[30]:

Երբ մանուկը յանձն էր առնում կատարել այս ամենը, մանկտաւագը գօտի էր կապում նրա մէջքին՝ ասելով. «Աստուած շնորհաւոր առնէ»: Ապա նրան օրհնում էին միւս եղբայրները (տղաները), եւ ծիսակատարութիւնն աւարտւում էր: Մանկտաւագը պարտաւոր էր մանուկներին ուսուցանել մարդասիրութիւն, աշխատասիրութիւն, ֆիզիկական ցանկութիւնների զսպուածութիւն եւ նմանատիպ այլ բաներ:

Երզնկացին ընդհանրութիւններ էր նկատում կնքահօր եւ մանկտաւագի պարտականութիւնների միջեւ, այսինքն՝ նրանք նոյն գործառոյթն ունէին. «թէպէտ ամենայն շնորհք յեկեղեցին բաշխի ձեռամբ քահանայիցն, բայց որ բարեգործ եւ սուրբ քրիստոնեայք են, նոցա արժան է, որ

25 Ձեռ. 711, Մաշտոց ԺԷ, ԺԴ. կամ ԺԵ. դար, թղ. 15բ-16բ: Տե՛ս Վենետիկի ցուցակ, էջ 209:

26 Ձեռ. 138, Մաշտոց ԻԱ, ԺԵ. դ., թղ. 20բ: Տե՛ս Վենետիկի ցուցակ, էջ 222:

27 Գօտու և նրա ծիսական նշանակության մասին տե՛ս **Գրիգոր Տաթեւացի**, *Գիրք քարոզութեան, որ կոչի Զմեռան հատոր*, Երուսաղէմ, 1998, էջ 666: **Քաջբերունի**, *Հայկական սովորոյթներ*, – ԱՀ, գ. 7-8, Թիֆլիս, 1901, էջ 177: **Լիսիցեան Ստ.**, *Զանգեզուրի հայերը*, Եր., 1969, էջ 194: **Ցարութիւնեան Ս.**, *Հայ առասպելաբանութիւն (Միսական գօտու առասպելոյթը)*, Բէյրութ, 2000, էջ 210-219: **Ստեփանեան Ա.**, *Հայ ժողովրդական տարազի զարդանախշերը*,– «Հայ ազգագրութիւն և բանահիւսութիւն», հտ. 22, Եր., 2007, էջ 16-21:

28 **Յովհաննէս Երզնկացի**, *Մատենագրութիւն. Մաղեր եւ քարոզներ*, հտ. Ա, բնագրերը հրատարակութեան պատրաստեցին Ա. Երզնկացի – Տէր-Սրապեանը եւ Էդ. Բաղդասարեանը, Եր., 2013, էջ 410:

29 Մանկտաւագ – Նշանակում է «մանուկների, պատանիների խմբի ղեկավար անձ». բաղկացած է «մանկտի» (պատանի, երիտասարդ, զինուոր) և «աւագ» բառերից: Տե՛ս **Խաչիկեան Լ.**, *1280 թուականին Երզնկայում կազմակերպուած «Եղբայրութիւնը»*,– «Աշխատութիւններ», հտ. Ա, Եր., 2012 թ., էջ 264-284:

30 **Բաղդասարեան Էդ.**, *Յովհաննէս Երզնկացին և նրա խրատական արձակը*, Եր., 1977, էջ 237-238:

լինին մանկտաւագ, եւ որպէս հայր եւ ծընաւղ գթայ ի հոգեւոր որդիսն եւ յորդորեն զմանկունսն յամենայն գործս բարիս, եւ բանիւ եւ գործով առաջնորդեսցին նոցա, եւ տան գօտի սրբասէր մանկանցն»[31]: Ըստ Երզնկացու՝ մանկտաւագութիւնն աշխարհական գործ է եւ եկել է շատ հնուց: Այդ մասին վկայում է նաեւ Ալիշանը՝ ուշադրութիւն հրաւիրելով հեթանոսական ժամանակների՝ թուով ութսուն «տանջանաց աստիճանների» վրայ, որոնք «նոր ժամանակաց աշակերտութեան կամ նուիրապետութեան կարգաց զուգուին»[32]: Չափահասների Մկրտութեան հետ. «ապա ի ժամ մկրտութեան առ դրան եկեղեցւոյն ուխտիւն զայս կարգ ի վերայ տղայոցն եւ չափահասակացն»[33]: Սա համարուել է հոգեւոր ձեռնադրութիւն: Սակայն, բացի հոգեւոր ձեռնադրութիւնից, տեսնում ենք նաեւ մկրտուողի մուտքն աշխարհիկ նոր կեանք. «քանզի Մկրտութիւնն է խորհուրդ վերածնելութեան ի նոր կեանս: Եւ դրոշմն է խորհուրդ զինուորութեան, որով բարւոք սպառազինի ոք ընդդէմ մարտնչողացն հաւատոյ... որպէս եւ ըմբիշն օծանի իւղով, զի անըմբռնելի լիցի ի մրցամարտէն»[34]:

Կնունքի ժամանակ յաճախ կատարուել է նաեւ երեխայի անուանակոչութիւնը: Սովորաբար քահանան է որոշել անունը՝ ընտրելով այդ օրը յիշատակուած սրբերի անուններից, իսկ երբեմն էլ՝ գերդաստանի մեծը՝ գերդաստանի մահացած որեւէ անդամի յիշատակը վառ պահելու ցանկութեամբ:

Հայոց եկեղեցական կարգի համաձայն՝ ծննդաբերութիւնից մինչեւ Կնունք թէ՛ ծննդկանը, թէ՛ նորածինը, թէ՛ տատմայրն ու մանկաբարձներն անսուրբ էին համարւում: Մարդիկ աշխատում էին նրանց հետ չշփուել, հաց չուտել, պղծուած էին համարւում նոյնիսկ այն իրերը, որոնց նրանք ձեռք էին տալիս (նրանց համար առանձին ափսէներ էին պահում եւ Մկրտութիւնից յետոյ սրբում ու լուանում էին միւռոնաջրով):

Մկրտութեան խորհուրդը եկեղեցում կատարելուց յետոյ քահանան երեխային յանձնում էր քաւորին, եւ միասին գնում էին մկրտուողի տուն: Շատ վաղ ժամանակներում քահանան եկեղեցուց տուն գնալու ճանապարհին, բացի շարականներ երգելուց, փոքրիկ զանգակներ է հնչեցրել[35], որը, հաւանաբար, ունեցել է չարը վանելու, հեռացնելու խորհուրդ:

Բուլանխում երեխային մկրտելուց յետոյ դնում էին մօր կողքին՝ մաղի վրայ. «ըստ ոմանց՝ մեռոնի սրբութիւնը յարգելու համար»[36]: Տանը, երբ կնքահայրը երեխային տալիս էր մօրը, նորածնի մայրը խոնարհւում, համբուրում էր քաւորի ոտքը եւ վերցնում էր բարուրը, ապա համբուրում էր քաւորի ձեռքը. «ծննդկանը կիսահագնուած պառկած է լինում իւր անկողնի մէջ, եւ աջ կողմում դրուած է լինում մի խոնչայ՝ վերան երկու լաւաշ հաց: Ծննդկանը երեխային դնում է հացերի վրայ[37] եւ քաւորի ձեռի երկու մոմը (որը եկեղեցում արարողութեան ժամանակ քաւորի ձեռքին է լինում) վառում երեխայի գլխի ու ոտների մօտ»[38]: Իսկ աւելի ուշ շրջանում արդէն քաւորի ոտքը

31 Նոյն տեղում, էջ 70-71:

32 **Ալիշան Հ. Ղ.**, *Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց*, Վենետիկ, 1895, էջ 284-285:

33 *Մաշտոց*, Վենետիկ, 1831, էջ 4:

34 ՄՄ, ձեռ. 2980, **Յակոբ Նալեան**, *Մեկնութիւն եօթն խորհրդոց եկեղեցւոյ*, Կոստանդնուպոլիս, 1764, էջ 121աբ:

35 **Լալայեան Ե.**, *Վայոց ձոր*, – ԱՀ, գիրք XIII, Թ., 1906, էջ 141:

36 **Բենսէ**, *Բուլանըխ կամ Հարք գաւառ*, – ԱՀ, գիրք Ե., Թ., 1899, էջ 127:

37 Երեխային դնում էին հացի վրա, որպեսզի «երեխան դովլըթուոր, կարողութեան տէր լինի»: Տե՛ս **Լալայեան Ե.**, *Բորչալուի գաւառ*, – ԱՀ, գիրք IX, Թ., 1902, էջ 254:

38 **Նոյնի՝** *Գանձակի գաւառ*, – ԱՀ, գիրք Զ., Թ., 1900, էջ 279:

համբուրելու փոխարէն սանամայրը խոնարհւում եւ վերցնում էր երեխային՝ դնելով իր աջ կողմում՝ բարձի վրայ:

Համաձայն քրիստոնէական կանոնների՝ Եկեղեցին արգելել է ազգակցական առաջին կամ երկրորդ աստիճանի ամուսնական կապը կնքահօր եւ սանամօր միջեւ: Սա նշանակում է, որ նախաքրիստոնէական շրջանում այդ կապը եղել է, իսկ յետագայում խիստ մերժուել է Եկեղեցու կողմից: Կնքահօր եւ սանամօր կապը յատկապէս զգացւում էր ազգագրական շրջաններում կատարուող Կնունքի արարողութեան ժամանակ, երբ քաւորի համար սանամայրը կապում էր «խոնչան»՝ մթերքով ու նուէրներով (մի քանի զոյգ գուլպայ, թաշկինակ, վերնաշապիկ եւ այլն): Մկրտութիւնից յետոյ սանամայրը, քաւորի ձեռքից ստանալով երեխային, համբուրում էր կնքահօր ոտքն ու ձեռքը, իսկ «քաւորը եւ քահանան նստում էին ծննդկանի անկողնի վրայ՝ մէջք մէջքի տուած եւ մի-մի ափսէ ձուաձեղ ուտում»[39], որը, ըստ ժողովրդական մեկնաբանման, արւում էր այն բանի համար, որպէսզի երեխան լացկան չլինէր[40]:

Որոշ գիտնականների կարծիքով[41] նորահարսի նկատմամբ քաւորի լիարժէք իրաւունքը հետք է թողել Մկրտութեան ծէսում. նա էր դառնում երեխայի «հոգեւոր» հայրը՝ «կնքահայրը» (մանաւանդ, որ ուխտից յետոյ ծնուած երեխայի քաւորը գոտի կապողն էր լինում[42]): Այսինքն՝ քաւորը մասնակից էր լինում ե՛ւ ամուսնութեանը, ե՛ւ երեխայի Մկրտութեանը:

Քաւորը կարեւոր նշանակութիւն ունէր հայոց ընտանեկան համակարգում. նրան յարգում ու պատւում էին, մանաւանդ՝ սանամայրը, որը, ի նշան յարգանքի, ցմահ անխօս էր մնում նրա հետ եւ «մինչեւ անգամ նրան տեսնելիս փախչում՝ թաք էր կենում»[43]: Նշանաւոր տոներին քաւորին «բօղչա» կամ «սեղան» էին ուղարկում՝ երբեմն փոխադարձաբար որեւէ նուէր ստանալով[44]:

Շատ տարածաշրջաններում քաւորութիւնը տոհմական է եղել եւ յաճախ այնքան երկար է տեւել, որ երդուելիս ասել էին. «էն կուժ մեռոն վկայ էղնի»[45], այսինքն՝ երեխաներին մկրտելով՝ այնքան միւռոն են բերել այդ օջախ, որ կարող էր մի կուժ լցուել: Երբեմն քաւորութիւնը լինում էր փոխադարձ. նման դէպքում քաւորին կոչում էին խաչ-քաւոր: Քաւորին փոխում էին միայն այն ժամանակ, երբ «նրա ոտքը վրայ չի գալիս»[46], այսինքն՝ նրա մկրտած երեխաները երկար չէին ապրում կամ սանամայրը շարունակ աղջիկներ էր ծնում[47]:

Համշենցիների մօտ կնքահայր լինելը ցանկալի ու նախանձելի էր համարւում. «ամենքն են ուզում սանիկ ունենալ: Դա Համշէնցիների կարծիքով մեծ վարձք էր: Մարդ անպատճառ գոնէ մի սանիկ պիտի ունենայ կնքած: Նրանց կարծիքով՝ ով որ իր կեանքում բոլորովին երեխայ չի կնքել, միւս կեանքում նրա գրկին մի շուն կը դնեն»[48]:

---

39 Նոյնի՝ *Վայոց ձոր*, – ԱՀ, գիրք XIII, Թ., 1906, էջ 141:

40 Նոյնի՝ *Նախիջեւանի գաւառ*, Ա. մաս՝ *Գողթն*, – ԱՀ, գիրք XII, Թ., 1905, էջ 139:

41 Սամուէլեան Խ., *Հին Հայաստանի կուլտուրան*, հտ. Ա., Եր., 1931, էջ 245:

42 Տե՛ս Լալայեան Ե., *Նոր Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք*, – ԱՀ, գիրք XVI, Թ., 1907, էջ 52:

43 Նոյնի՝ *Վայոց ձոր*, – ԱՀ, գիրք XIII, Թ., 1906, էջ 140:

44 Նոյնի՝ *Նոր Բայազէտի գաւառ*, – ԱՀ, գիրք XVI, Թ., 1907, էջ 38:

45 Նոյնի՝ *Մուշ-Տարօն*, – ԱՀ, գիրք XXVI, Թ., 1917, էջ 180:

46 Նոյնի՝ *Վայոց ձոր*, – ԱՀ, գիրք XIII, Թ., 1906, էջ 140:

47 Նոյնի՝ *Նոր Բայազէտի գաւառ*, – ԱՀ, գիրք XVI, Թ., 1907, էջ 38:

48 Մուրադեան Ց., *Համշէնցի հայեր*, – ԱՀ, գիրք Ե., Թ., 1899, էջ 364:

Մկրտութիւնից երեք օր յետոյ հանում էին միւռոնից[49], *որն անուանում էին միւռոնհանէք կամ մեռոնահանէք: Ազգագրական որոշ շրջաններում, ինչպէս Ջաւախքում, աղջկան աւելի ուշ էին հանում միւռոնից: Տղայ երեխային միւռոնից հանում էին երեք օր յետոյ, որ «ճակտով ըլլի, չամնչէ», իսկ աղջկան՝ եօթ օր յետոյ, որպէսզի ամաչկոտ ու պարկեշտ լինի*[50]*: Մշոյ գաւառում «աղջիկը 4-5, իսկ տղան 3 օր թողնում են մեռոնի մէջ, ապա տատմայրը լուանում է մեռոնած տեղերը՝ մի մաքուր ամանի մէջ (կարող է դա լինել հացի տաշտ)»*[51] *եւ այդ ջուրը պահում էին՝ որեւէ անմաքուր իր (օրինակ՝ շան, մկան կպած կամ պղծուած իր) սրբելու*[52]*: Որոշ վայրերում էլ լցնում էին թոնրի, օջախի կամ գետի մէջ*[53]*՝ որպէս սուրբ տեղեր: Շատ անգամ Մկրտութեան խորհուրդից յետոյ էին եկեղեցուց բերում շշով կամ որեւէ ամանով լի մեռոնաջուր, լուանում ծննդկանի ձեռքերը, որպէսզի անմաքուր չլինեն՝ թէ՛ միւռոնուած երեխային գրկելու եւ թէ՛ տան պարագաներին, իրերին դիպչելու համար*[54]*:*

Միսական հետաքրքիր սովորութական արարողութիւն էր պահպանուել Ջաւախքում: Երեխային միւռոնից հանում էր դայեակը: Նա լողացնում էր գոլ ջրով, քաշում էր երեխայի ձեռքերը՝ ասելով. «Թեւերտ օրն ըստըղըր էրկննայ», ապա քաշում էր ոտքերը՝ ասելով. «օտուիքտ օրն ըստըղըր էրկննայ», յետոյ՝ վիզը. «պոյըտ ըստըղըր էրկննայ»: Տաշտի ծայրերի երկու կողմերում փոքր երեխաներ էին կանգնեցնում՝ ձեռքերին մեկական մոմ: Երբ դայեակը երեխային տաշտից հանում էր, կանգնածներից մեկը դէպի դուրս էր վազում. «դուս փախչին կ'օր տղան սրտոտ ըլլիէ, իսկ միւսը՝ դէպի օջախը եւ հանգցնում մոմերը. «դիպայ օճախն ա օր վազեն կը, տղան բաղդաւոր կ'ըլլար»[55]*:*

Գանձակի գաւառում միւռոնից հանում էին հետեւեալ կերպ. հացի տաշտը դնում էին թոնրի վրայ, մի քիչ իւղ կամ մի ճուի դեղնուց էին քսում երեխայի այն մասերի վրայ, ուր միւռոնն էր քսուած, եւ կնունքի ժամանակ գործածուած երկու մոմերը, որոնք քաւորի ձեռքին էին, վառում էին տաշտի երկու կողմերում: Ապա լողացնում էին երեխային՝ օրհնելով ու բարեմաղթելով.

«Հօրաւ ըլես, մօրաւ ըլես, Կարմիր օրաւ ըլես. Ումրդ էրկան ըլի, Քու ճօրն ու մօրը ճնազանդ ըլես[56]:

Կամ՝

«ճօրով ըլի, մօրով ըլի, // Բաղդաւոր ըլի, աստղով ըլի:
Փայով ըլի, ծրլով ըլի. // Աստուած պահի պահպանի»[57]:

Մինչեւ միւռոնից հանելը չի թոյլատրուել լողացնել երեխային, որպէսզի «երեխան անմեռոն՝ անպատկառ չլինի, մանաւանդ եթէ աղջիկ է»[58]*:*

Ակնեցիները միւռոնից հանելուց յետոյ տղայ երեխային գլորում էին յատակին՝ նախապէս գետնին դնելով մի կտոր հաց, գիրք եւ գրիչ: Այս արարողութեան ի-

---

49 Որոշ շրջաններում միւռոնից հանում էին հէնց յաջորդ օրը՝ առանց որեւէ ծիսակատարութեան: Տե՛ս **Լալայեան Ե.**, *Նախիջեւանի գաւառ*, Ա. մաս՝ Գողթն, – ԱՀ, գիրք XII, Թ., 1905, էջ 140:

50 Նոյնի՝ *Ջաւախք*, – ԱՀ, էջ 271:

51 Նոյնի՝ *Մուշ-Տարօն*, – ԱՀ, գիրք XXVI, Թ., 1917, էջ 181:

52 **Լալայեան Ե.**, *Վարանդա*, – ԱՀ, գիրք Բ., Թ., 1897, էջ 148: Տե՛ս նաեւ նոյնի՝ *Նոր Բայազէտի գաւառ կամ Գեղարքունիք*, – ԱՀ, գիրք XVI, Թ., 1907, էջ 37:

53 Նոյնի՝ *Սիսիան*, էջ 231:

54 Նոյնի՝ *Վարանդա*, էջ 148:

55 Նոյնի՝ *Ջաւախք*, էջ 271:

56 **Նոյնի՝** *Գանձակի գաւառ*, – ԱՀ, գիրք Զ., Թ., 1900, էջ 279:

57 Նոյն տեղում:

58 **Նոյնի՝** *Բորչալուի գաւառ*, էջ 256:

մաստը խտանում էր օրհնութեան հետեւեալ բանաձեւի մէջ. «խորունկ կարդացող ըլլաս, գրչէդ կրակ ցաթէ, Աստուծոյ երկիւղն ունենաս՝ եւ հացդ դիւրութեամբ վաստակիս»[59]: Իսկ եթէ երեխան աղջիկ էր, ապա գետնին դնում էին հաց, բամբակ, ոսկի ու մարգարիտ՝ ասելով. «ոսկիներու եւ մարգարիտներու մէջ լողաս, բամբակի պէս սպիտակ ու մաքուր մնաս, հացդ մատակարարել գիտնաս»[60]:

Նորածին այն երեխային, որին դեռ չէին հասցրել մկրտել, մահանալու դէպքում թաղում էին ոչ թէ համայնքի կամ տոհմական գերեզմանոցում, այլ դրանից եօթ քայլ հեռու: Այդ ննջեցեալների համար նոյնիսկ թաղման արարողութիւն կամ որեւէ աղօթք չէր արւում, այլ անձայն, առանց քահանայի ու ծիսակատարութեան, երբեմն էլ գաղտնի էին թաղում: Մկրտութեան ծէսով, փաստօրէն, հասարակութիւնը որդեգրում էր նորածին անհատին: Սակայն լինում էին դէպքեր, երբ երեխան անկնունք էր մահանում, բայց հարազատները քահանային որոշակի գումար էին տալիս, եւ վերջինս կատարում էր անխօս ծիսակատարութիւն՝ միայն գործողութեամբ. «քահանան եկեղեցու ներսի պատի վրայ՝ որեւէ տեղ, մի փոքրիկ խաչ է կերտում եւ, համաձայն Մաշտոցի կանոնի, օծում (խաչի օծում), եւ կամ մի պղնձէ փոքրիկ խաչ է օծում եւ Աւետարանի կամ սրբերի պատկերների վրայ կապում եւ կամ դնում աւազանի պատուհանի մէջ: Այսպիսով, ուզում են յայտնել, որ նորածինը նուիրուած է եկեղեցուն, որեւէ սրբի»[61]:

Մկրտութիւնից յետոյ լինում էր հրաւէրքի ճաշ, որ կոչւում էր «կնքաճաշ»[62]: Կնունքի համար նախատեսուած յատուկ կերակրատեսակներ չեն եղել, սակայն անհրաժեշտ էր, որ երեք տեսակից պակաս չլինէին, եւ դնում էին աւանդական ձուածեղը, «որ ուտելուց յետոյ, հրաւիրեալներից իւրաքանչիւրին համար անհրաժեշտ պարտականութիւն է համարում փող ձգելու ձուածեղի սկուտեղի մօտ յատկապէս այդ նպատակի համար դրուած պնակի մէջ, որից հին ժամանակները հատուցուել է դայեկի կամ մանկաբարձի աշխատութեան վարձը»[63]:

Մկրտուողին եւ նրա հարազատներին շնորհաւորում էին հետեւեալ խօսքերով. «աչուքներդ լուս, շնորհաւոր մկրտութիւն ըլլի, Աստուած հօրով-մօրով պահէ, խոր ծերութեան հասցնէ, քուկ ա, քաւոր աղա, դատումքդ կատար»[64], «աստուած երեխին օջախին բաշխէ»[65], «շնորհաւոր Մկրտութիւն, Աստուած տուել է, ամուր ձեռօք պահէ, հօրով-մօրով ու բախտաւոր զաւակ լինի, այն հացիցն ուտէ, որ ոչ հատնէ, ոչ պակասէ»[66]:

---

59 *Ակն եւ ակնցիք*, նախաձեռնեց եւ հաւաքեց Ա. Քէչեան, աշխատասիրեց եւ խմբագրեց Մ. Պարսամեան, Փարիզ, 1952, էջ 254:

60 Նոյն տեղում:

61 **Լալայեան Ե.**, *Մուշ-Տարօն*, – ԱՀ, գիրք XXVI, Թ., 1916, էջ 181:

62 Նոյն տեղում:

63 **Ցահազիզ Ե.**, *Ծէսեր և սովորութիւններ*, – ԱՀ, գիրք 7-8, Թ., 1901, էջ 99:

64 **Լալայեան Ե.**, *Զաւախք*, էջ 271:

65 **Նոյնի՝** *Բորչալուի գաւառ*, – ԱՀ, գիրք IX, Թ., 1902, էջ 255:

66 **Նոյնի՝** *Վարանդա*, էջ 149: